Մենք
պետական եւ ազգային արժեքների
հանրահռչակման հիմնադրամ

0015, Երևան, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
Հեռ. (+374 93) 999 390, (+374 55) 099 013
Էլ. փոստ՝ info@menq.org
www.yeraguyn.com

Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին

Հարգելի պարոն քաղաքապետ,

Ի լրումն 08.05.2019թ. Ձեզ ուղղված նամակին հայտնում ենք, որ «Մենք» հիմնադրամի և Մոսկվայի մետրոպոլիտենի ղեկավարության միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ հուլսի 3-5-ը Հայաստան են ժամանելու Մոսկվայի մերոպոլիտենի «Музыка в метро» ծրագրում ընդգրկված 12 անհատ երաժիշտներ՝ մասնակցելու "Tricolor" Yerevan International Street Music Festival-ում:

Սակայն քաղաքապետարանի համապատասխան մարմնից տեղեկացել ենք, որ հուլիսի 1-ից 5-ը ընկած ժամանակահատվածում Ազատության հրապարակում ՀՀ սահմանարության և պետական խորհրդանշանների տոնակատարության շրջանակներում կազմակերպվող "Tricolor" Yerevan International Street Music Festival-ը երաժշտական խմբերի, նվագախմբերի և անհատ երաժիշտների բացօթյա փառատոնը անհնար է անց կացնել, քանի որ Ազատության հրապարկը հունիսի 25-ից մինչ հուլիսի կեսը տրամադրվել կամ թույլատրվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային միջոցառում կազմակերպելու նպատակով: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից տեղեկացել ենք, որ իրենց միջոցառման բացման արարողությունը տեղի է ունենալու հուլիսի 10-ին, այդ իսկ պատճառով՝ 23.05.2019թ. պաշտոնապես նամակով դիմել ենք ֆեդերացիային Ազատության հրապարակում իրենց կողմից իրականցվող մեծամաշտաբ ծրագրի ընթացքում նաև հնարավորություն տալ իրականացնելու մեր ծրագրերը, սակայն մինչ օրս չունեք պատասխան: Ստեղծված իրավիճակում խնդրում ենք հետևյալը՝

1. Հուլիսի 1-5-ը թույլատրել Շահումյանի անվան հրապարակում տեղադրելու հատուկ փառաոնի համար պատրաստվող 228 անձի նստատեղով տրիբունա (տրիբունայի չափսերն են 18մ * 7,5մ չափսերով): Տրիբունան ծրագրում ենք տեղադրել հրապարակի կենտրոնական հատվածում:

2. ՀՀ սահմանադրության և պետական խորհրդանշանների տոնակատարության շրջանակում (հուլիսի 4-5) կազմակերպվող "Tricolor" Yerevan International Street Music

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԱՅԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
No 19/5041 5 06 06/5 20 թ.
1548591

Festival-ի փառատոնի մասնակից նվագախմբերի և անհատ կատարողների թույլատրել՝

2.1. Հուլիսի 4-ին և 5-ին ժամը 12:30-14:00-ը Երևանի մետրոպալիտենի՝ «Բարեկամություն», «Երիտասարդական», «Հանրապետության Հրապարակ», «Զորավար Անդրանիկ», «Սասունցի Դավիթ», «Շենգավիթ» և «Գարեգին Նժդեհ» կայարանների պլատֆորմների հատվածներում փառատոնի մասնակից երաժիշտներին կատարումներով հանդես գալ: Հավելենք, որ մետրոպոլիտենի աշխատակազմի հետ նախնական քննարկել և ընտրել ենք կայանները:

2.2. Հուլիսի 5-ին ժամը 19:30-21:30-ը Հանրապետության Հրապարակում, Հյուսիսային պողոտայում, Գաֆեսճյան արվեստի կենտրոնի բացօթյա տարածքում, «Երևանի 2800-ամյակի այգում», Նոր Նորք վարչական շրջ. Գայի արձանի հարակից տարածքում, Դավիթաշեն վարչական շրջ. կետրոնական այգում և Արաբկիր, Շենգավիթ, Էրեբունի վարչական շրջանաններում փառատոնի մասնակից երաժիշտներին կատարումներով հանդես գալ: Վերը նշված վայրերը քաղաքապետարանի աշխատակազմի հետ քննարկման արդյունքում կարող են փոփոխվել:

3. Հուլիսի 5-ին՝ ՀՀ սահմանադրության և պետական խորհրդանշանների տոնական օրը, ժամը 18:00-18:30 սահմաններում թույլատրել Ազատության հրապարակի կենտրոնից եռագույն օդապարիկի օդ բարձրացնելու արարողակարգ և ժամը 18:45-19:15 Ազատության հրապարակի կենտրոնում տարբեր պարային համույթների, քայլերթի մասնակից երեխաների համատեղ պար իրականացնել: 19:30-ին Ազատության հրապարակից ավանդական տոնական քայլերթի մեկնարկ, որին կմասնակցեն ՀՀ մարզերի, Երևանի վարչական շրջանների և սփյուռքից ժամանած երիտասարդներ և երեխաներ՝ ընդհանուր թվով մոտ 5,000-7,000 մարդ: Տոնական քայլերթի երթուղին կմեկնարկի Ազատության հրապարակից, անցնելով Մաշտոցի պողոտայով, Ամիրյան փողոցով, Հանրապետության հրապարակով, որտեղ ծրագրում ենք նաև իրականացնել ֆլեշմոբ՝ գորգի հատվածում մարդկանցով կազմված տեքստ պատկերել: Հանրապետության Հրապարակից շարունակելով քայլերթը Աբովյան փողոցով և Պուշկին փողոցով, Հյուսիսային պողոտայով կրկին մուտք գործել Ազատության հրապարակ (տոնական քայլերթը և ֆլեշմոբը կտևի մոտ մեկ ժամ): Ազատության հրապարակում ժամը 20:30-ից կմեկնարկի ազգային երգ ու պարի մոտ մեկ ժամ տևողությամբ ծրագիր:

Հավելենք, որ քայլերթին կմասնակցեն՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԻՆ նվագախմբերը, «Երևանյան թմբուկներ» թմբկահարուհիների խումբը, ՀԲԸՄ Երևանի սկաուտական փողերախումբը, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտները, դհոլահարների խմբեր, Վրաստանից ժամանած "Georgian Marching Band" նվագախումբը, ՀՀ ոստիկանության մոտոցիկլավարները, հատուկ ամենագնացները և հեծանվորդներ:

4. Հուլիսի 4-ին՝ ժամը 20:00 կմեկնարկի “Tricolor” Yerevan International Street Music Festival-ը երաժշտական խմբերի, նվագախմբերի և անհատ երաժիշտների բացօթյա փառատոնի գալա-համերգը՝ արդեն Շահումյանի անվան հրապարակում, որին մասնակցելու են Հայաստանից 5 նվագախումբ՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԻՆ նվագախմբերը և պատվո պահակային վաշտերը, «Երևանյան թմբուկներ» թմբկահարուհիների խումբը, ՀԲԸՄ Երևանի սկաուտական փողերախումբը, ինչպես նաև Վրաստանից՝ “Georgian Marching Band” նվագախումբը և այլոք:

5. Հունիսի 5-ին կայացած աշխատանքային քննարմանը Երևանի քաղաքապետարանից ներկայացուցիչ չէր եկել և Երևանի վարչական շրջանների ներկայացուցիչները հրավիրվել էին մեր նախաձեռնությամբ: Խնդրում ենք, քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներին կապ հաստատել մեզ հետ, որպեսզի պատշաճ կազմակերպենք տոնական ծրագրերը:

6. Խնդրում ենք, քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մեծ պրոէկտորները տրամադրել հուլիսի 3-ին և 4-ին տոնակատարության շրջանակներում 3D անիմացիա ներկայացնելու Շահումյանի անվան հրապարի հարակից շենքերի վրա:

7. Խնդրում ենք, հնարավորության և նպատակահարմարության շրջանակներում, ֆինանսական աջակցություն ցուցաբերել վերը նշված տոնական ծրարգրերին:

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու տոնական ծրագրերին:

Հարգանքով՝

«Մենք» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամի հիմնադիր և գլխավոր տնօրեն՝ **Պավել Սարգսյան**

06.06.2019թ.

«ՄԵՆՔ»
"MENQ"
"MENK"